ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/29

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի, քննելով «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացված և 05.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/29 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 04.03.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից վերջինիս կարիքների համար անվտանգության և պահակային ծառայությունների

ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը, այնուհետև հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ. ամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ 19.02.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Ընկերությունն ունի հարկային պարտավորություններ, որը մարվել է տեղեկանալու պահից անմիջապես հետո:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող է ձեռք բերել միայն Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով վճարման ենթակա դրոշմանիշային վճարը

որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմնի կողմից իրազեկված չլինելու հետևանքով:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ. ամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.03.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրել է Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 13.02.2019թ. հայտ է ներկայացրել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 47 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 13.02.2019թ. հայտ է ներկայացրել «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր արժեքը կազմել է 2 800 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.02.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից;

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.02.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 47 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով, ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության համաձայն «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի 1 տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացել է 13.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 13.02.2019թ. դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ:

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 21.02.2019թ. տրված թիվ 568 տեղեկանքը, համաձայն որի 13.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերությունը ունի 65 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 13.02.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 13.02.2019թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 04.03.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 27.02.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3

արձանագրության 3-րդ կետով կայացրած «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացրած որոշումը.

3. Պարտավորեցնել «ԿԵԱՊ-ԳՀԾՁԲ-ԱՆՎՏ-19/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի հայտը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել բավարար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**